նրանց տիրել։ Հետեւաբար երկար դարեր այնքան ուժեղ եւ բարձր են եղել դրացիներից, որ նրանց վրայ տեսուչ եւ վարիչ են դարձել։ Խորենացու նկարագրութեան համաձայն Պարթեւ Վաղարշակը Պոնտոսն ու Եգերիան բարեկարգելուց յետոյ, Պարխալի (վտակի) ստորոտում, Տայքի մառախլապատ մութ անտառներում, լորենիների մէջ իր վայելքի համար ամառանոց — ձմեռանոց (կանանոց, թագստոց, դանձարան, վարժարան) է շինել տալիս, այգիների, բուրաստանների եւ վարդաստանների վերածում այդ կէճ եւ ճախճախուտ վայրերը։ Երեւի խօսքը վերաբերում է հին Պալխարին եւ Խալխալին, ուր շինել է տալիս, վերաշինում իր տոհմական կալուածները։

Խորենացին եթէ դաղափար չունենար Պալխար եւ Խալխալ ոստանների մասին, նա չէր վերագրիր Վաղարշակին դրանց կառուցումը։ Խորենացու ժամանակ այդ ամառանոց-ձմեռանոցի գոյութիւնն է նրան յիշեցնում, թէ այդ հսկայական շէնքերը կառուցուել են այդ «մեծագործ Պարթեւի» ծրագրով եւ եռանդով։

Ճորոխի Աւազանի կուսական անտառներումն են ծնել, սնել եւ զարգացել այն քաջ տիտանները, որոնք ո՛չ միայն դարէ դար իրենց ծննդավայրն են զարգացրել ու ամրացրել անառիկ բերդերով, այլ իրենց սահմաններից դուրս են եկել, մտել են շըր-